ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 96 - Լ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Ա.Մկրտչյանին՝ ապահովել ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնների կիրառման ընթացքի մշտադիտարկումը, կրթական բաղադրիչում օգտագործումը ու ներկայացնել առաջարկներ անհրաժեշտ լրամշակումների վերաբերյալ:

3.Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատակիցներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

23.12.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
2025 թվականի «23» դեկտեմբերի
N 96-Լ հրամանի

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոստիկանության ծառայողի վարքագծի կանոններով պետք է առաջնորդվեն «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով որևէ խմբի պաշտոն զբաղեցնող անձինք, բացառությամբ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձանց:

2. Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց (բացառությամբ լիազոր մարմնի ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետի) նկատմամբ կիրառվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշման դրույթները:

3. Վարքագծի կանոնները բխում են «Հանրային ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով սահմանված վարքագծի սկզբունքներից, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններից և հանդիսանում են հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարր:

4. Վարքագծի սկզբունքներն են՝ հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը:

5. Վարքագծի կանոնների սահմանման նպատակն է ոստիկանության ծառայողների բարեվարք վարքագծի, կոռուպցիայի նկատմամբ զգոնության ու անհանդուրժողականության ապահովումը, ոստիկանության ծառայության նկատմամբ հանրության վստահության ամրապնդումը, ինչպես նաև վարքագծի սկզբունքների կիրառման միասնականության ապահովումը:

6. Վարքագծի կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչներ:

7. Վարքագծի կանոնների պարտադիր բաղադրիչը (այսուհետ՝ Պարտադիր կանոններ) որոշակի վարքագիծ դրսևորելու կամ դրան հետևելու պարտադիր բնույթ ունեցող նորմերի համախումբ է, որոնց խախտումը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

8. Վարքագծի կանոնների խրախուսելի բաղադրիչը (այսուհետ՝ Խրախուսելի կանոններ) օրինակելի կանոնների համախումբ է, որոնք պարտադիր նվազագույնից

ավելին են և ուղղված են ոստիկանության ծառայողի գերազանց վարքագծի ապահովմանը: Ընդ որում, Խրախուսելի կանոնների թվարկումը սպառիչ չէ:

9. Խրախուսելի կանոններին չհետևելը չի հանգեցնում պատասխանատվության, սակայն սեփական վարքագծի համապատասխանեցումն այդ նորմերին խրախուսելի է:

10. Վարքագծի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

11. Վարքագծի կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները սահմանված են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասի» թիվ 01-Ն որոշման 12-րդ կետում:

12. Ոստիկանության ծառայողը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության համար դիմել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԳԻՏԱԿՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 1. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

13. Ոստիկանության ծառայողը պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին, օրենքի ոգուն և տառին համապատասխան:

14. Ոստիկանության ծառայողն իր լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենսդրական նորմերին համապատասխան՝ հարգելով անձի իրավունքները և ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը:

15. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր ծառայողական պարտականությունները կատարել պատշաճ, թույլ չտալ ծառայողական դիրքի չարաշահում և լիազորությունների սահմանի անցում:

16. Ոստիկանության ծառայողը պարտավոր է հստակ հիմնավորել իր պահանջներն ու գործողությունները, իսկ պահանջի դեպքում նաև բացատրել իր կայացրած որոշումների և գործողությունների իրավաչափությունը՝ պարտադիր վկայակոչելով վերաբերելի համապատասխան իրավական նորմերը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ (ՊԵՏ, ՀՐԱՄԱՆԱՏԱՐ) ՀԱՄԱՐ

17. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է օրինակ ծառայել ենթակա ծառայողներին և անձամբ պահպանել վարքագծի այն պահանջները, որոնք ակնկալում է մյուսներից:

18. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է հստակորեն տիրապետել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քաղաքականություններին, ինչպես նաև ոստիկանության և իր ստորաբաժանման նպատակներին, դրանց մասին պատշաճ տեղեկացնել իր ենթակա ոստիկանության ծառայողներին:

19. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձի կողմից տրված հրամանները, հանձնարարականները կամ կարգադրությունները պետք է լինեն իրավաչափ, համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին, լինեն հստակ ու կատարման համար հասկանալի: Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է իր կողմից տրված հրամանների, հանձնարարականների կամ կարգադրությունների պատշաճ կատարման համար ենթականերին տրամադրել անհրաժեշտ պարզաբանումներ:

20. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ իր կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս հրամաններ, հանձնարարականներ կամ կարգադրություններ տալուց:

21. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում ենթականերին զերծ պահել ոչ իրավաչափ գործողություններ կատարելուց կամ որոշումներ կայացնելուց, բացառել իր կողմից խտրական վարքագծի դրսևորումը, ինչպես նաև վերադասության լիազորության չարաշահումը:

22. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն վերապահված լիազորությունների շրջանակում պաշտպանել ենթակա ծառայողների օրինական շահերը, միջամտել նրանց հանդեպ ոտնձգության կամ այլ անարդար վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում:

23. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ենթակա ծառայողների հնարավոր շահերի բախման ռիսկերը կանխարգելելու, արձանագրելու և հետագա ընթացքն ապահովելու ուղղությամբ:

24. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է ենթակա ծառայողների կողմից կոռուպցիոն բնույթի գործողությունների և այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում պարտադիր գործուն քայլեր ձեռնարկել՝ դրանց առնչությամբ հետագա գործողությունների ընթացքն ապահովելու համար:

25. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պետք է բացառի ենթակա ծառայողի կամ

ստորաբաժանման համար կատարված որևէ նվիրատվության, հյուրասիրության կամ արտոնությունների ընդունումը, եթե այն կարող է ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, ոստիկանության կամ ստորաբաժանման անաչառության կամ հեղինակության վրա:

26. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է ձեռնարկել բոլոր ողջամիտ քայլերը ենթակա ծառայողների շրջանում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում ծառայությունը կանոնակարգող օրենքներով, սույն կանոններով սահմանած սկզբունքների իրազեկվածությունն ապահովելու ուղղությամբ և հետևողական լինել դրանց պահպանմանը:

27. Ոստիկանությունում ծառայության ղեկավար պաշտոն (պետ, հրամանատար) զբաղեցնող անձը պարտավոր է, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչի հետ, պատասխանել սույն կանոններով սահմանված վարքագծի կանոնների պատշաճ կատարման վերաբերյալ ենթակա ոստիկանության ծառայողների տրված հարցերին:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 3. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ

28. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պատշաճ և բարեխղճորեն կատարել իր ծառայողական պարտականությունները, որոշումներ կայացնել անկախ անձնական համոզմունքներից ու մոտեցումներից՝ գործելով օրենսդրական նորմերի շրջանակներում, ինչպես նաև իր վարքագծով օրինակ ծառայել ոստիկանության այլ ծառայողներին և հանրությանը:

29. Ոստիկանության ծառայողն իր լիազորություններն իրականացնում է հանրությանը ծառայելու, մարդկանց կյանքի և առողջության պահպանման, նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության, անվտանգության ապահովման գերակա նպատակներով:

30. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր լիազորութուններն իրականացնելիս հարգել և պաշտպանել յուրաքանչյուր անձի կյանքի, ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության իրավունքը, արժանապատվությունն ու անվտանգությունը, և որևէ իրավիճակում չպետք է կիրառի, հրահրի կամ հանդուրժի խոշտանգումներ կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ հարկադրանքի միջոց:

31. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնել արհեստավարժ ու ազնիվ, չպետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, այդ թվում՝ ծառայությունից դուրս, որը կասկածի տակ կդնի իր լիազորությունների անաչառ ու պատշաճ կատարումը, կվարկաբեկի կամ կնսեմացնի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, ոստիկանության կամ ոստիկանության ծառայողի հեղինակությունը, կխախտի այլոց իրավունքներն ու

ազատությունները և կխաթարի հանրության վստահությունը ոստիկանության նկատմամբ:

32. Ոստիկանության ծառայողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և ոստիկանության հեղինակությունը պահպանելու հարցում լինել հետևողական, բացահայտել և հնարավորինս վերացնել իր և ոստիկանության այլ ծառայողների կողմից թույլ տրված սխալները և բացթողումները:

33. Ոստիկանության ծառայողն իր լիազորությունները (նաև հայեցողական) իրականացնելիս պետք է հետևի վարքագծի սկզբունքներին՝ հաշվի առնելով հետապնդվող նպատակները և կայացվող որոշումների հնարավոր հետևանքները, իր գործողություններն ակնհայտորեն ուղղված լինեն մարդու իրավունքների, ազատությունների և հանրային շահի պաշտպանության, ինչպես նաև ոստիկանության խնդիրների իրականացման ապահովմանը:

34. Ոստիկանության ծառայողը չպետք է գիտակցաբար նախաձեռնի կամ պահպանի ընկերական, գործնական կամ այլ բնույթի փոխհարաբերություններ քրեական ենթամշակույթ կրող կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող կամ քրեական պատախանատվությունից և պատժից խուսափող անձանց հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ամենը հիմնավորվում է ծառայողական պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ կամ կապն այդ անձանց հետ անխուսափելի է՝ կապված նախկինում գոյություն ունեցող ընտանեկան, ազգակցական կամ ամուսնական հարաբերություններով: Նման դեպքերում ոստիկանության ծառայողը պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել իր անմիջական ղեկավարին:

35. Ոստիկանության ծառայողը ծառայողական պարտականությունները կատարելիս, ինչպես նաև ծառայությունից դուրս պարտավոր է նախաձեռնություն ցուցաբերել և իր տիրապետման տակ գտնվող՝ օրենքով նախատեսված և թույլատրելի բոլոր հասանելի միջոցների օգտագործմամբ աջակցել իրեն դիմած անձանց, հատկապես խոցելի խմբերին՝ օգնելու իրացնել իրենց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները:

36. Ոստիկանության ծառայողը զբաղեցրած պաշտոնը չպետք է օգտագործի իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

ԳԼՈՒԽ 4. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

37. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն, չպետք է կեղծի կամ դիտավորությամբ խեղաթյուրի փաստերը, ինչպես նաև պարտավոր է հանրությանը տրամադրել օբյեկտիվ և ճշգրիտ տեղեկատվություն իր գործունեության

և կայացրած որոշումների մասին՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկությունների:

38. Ոստիկանության ծառայողը պարտավոր է բացառել չճշտված, իրականությանը չհամապատասխանող և ապակողմնորոշող տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև ոստիկանության այլ ծառայողներից չպահանջել նման տեղեկությունների տրամադրում:

39. Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, հանրային ծառայության այլ մարմինների հետ համագործակցելիս և նրանց հետ իր գործողությունները համակարգելիս, ոստիկանության ծառայողը պարտավոր է գործել թափանցիկ՝ պատշաճ կերպով արձագանքել առաջացած խնդիրներին, տրամադրելով նրանց անհրաժեշտ աջակցություն:

40. Ոստիկանության ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում՝ հանրային լսումների, ընդունելությունների կազմակերպման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ եղանակներով:

ԳԼՈՒԽ 5. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

41. Ոստիկանության ծառայողն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է խուսափել այնպիսի գործողության կատարումից կամ որոշման ընդունումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ առաջնորդվել իր հետ փոխկապակցված անձի շահով:

42. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում ոստիկանության ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները, ինչպես նաև պետք է խուսափի այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ:

43. Եթե ոստիկանության ծառայողի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա ոստիկանության ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հայտարարություն ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Նախքան վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի գրավոր հանձնարարություն կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկություն ստանալը՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ

հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով:

44. Ոստիկանության ծառայողը պարտավոր է չտալ երաշխավորություններ կամ չանել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձի ոստիկանությունում ծառայության պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնեական կարգավիճակի բարելավման և այլ հարցերով, ինչպես նաև չդրդել որևէ մեկին տալ նման երաշխավորություններ կամ միջնորդություններ անել:

ԳԼՈՒԽ 6. ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ

45. Ոստիկանության ծառայողին թույլատրվում է ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված կամ պաշտոնական դիրքով պայմանավորված ընդունել միայն այնպիսի նվերներ, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասում (թույլատրելի նվեր):

46. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող անձի:

47. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ ուղիղ կամ միջնորդավորված ոչ նյութական առավելություն ընդունելուց, եթե կարող է ողջամտորեն ընկալվել, որ այն կարող է ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա, այդ թվում՝ ձևավորել տվյալ կամ երրորդ անձի նկատմամբ պարտավորության զգացողություն կամ հանգեցնել չհիմնավորված նախապատվության: Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքն ակնհայտ չէ:

48. Ոստիկանության ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին: Թույլատրելի նվերի հաշվառման, հանձնման, գնահատման և ռեեստրում վարման գործընթացները կանոնակարգվում են «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթներով:

49. Ոստիկանության ծառայողը պետք է միջոցներ ձեռնարկի, որ իր ընտանիքի անդամները և իր հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ ոչ նյութական առավելություն կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ ոստիկանության ծառայողի ծառայողական պարտականությունների կատարման կամ իր պաշտոնական (ծառայողական) դիրքի և ստացված նվերի կամ ոչ նյութական առավելության միջև:

50. Եթե ոստիկանության ծառայողը ստացել է նվեր, կամ հայտնի է դարձել, որ իր ընտանիքի անդամները ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես ծառայողական լիազորությունների իրականացման կամ պաշտոնական դիրքի կապակցությամբ տրված, ապա ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ 15-օրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչի խորհրդատվական կարծիքի համաձայն նվերը թույլատրելի չի համարվել, ապա ոստիկանության ծառայողը պարտավոր է խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում վերադարձնել նվերը կամ վճարել դրան համարժեք հատուցում: Եթե նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա ոստիկանության ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել կամ դրան համարժեք վճարը վճարել պետությանը կամ համայնքին:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 7. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

51. Ոստիկանության ծառայողը դրսևորում է հարգալից վերաբերմունք ու բարեկրթություն անձանց հետ հաղորդակցվելիս՝ ինչպես լիազորություններն իրականացնելու ընթացքում, այնպես էլ ծառայությունից դուրս՝ մասնավոր, անձնական հարաբերություններում և շրջապատում:

52. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս, ներկայանալ՝ հայտնելով անունը, ազգանունը և այն մարմինը, որը ներկայացնում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

53. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս քաղաքացիների հետ փոխհարաբերություններում լինել բարեվարք՝ պարտադիր ներկայանալ ի պաշտոնե՝ դիմելով նրանց «Դուք» կամ «պարոն/տիկին» դիմելաձևով, հաղորդակցվելիս բացառել ժարգոնային կամ քրեական ենթամշակույթին բնորոշ կամ անձին ստորացնող, ծաղրող կամ ահաբեկող բառապաշարի կիրառումը: Այն քաղաքացիների հետ հաղորդակցվելիս, ովքեր չեն տիրապետում հայերենին, ոստիկանության ծառայողը, տիրապետելու դեպքում, կարող է հաղորդակցվել իրենց համար հասկանալի լեզուներով:

Բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է չընդունել, չպահանջել կամ.չխրախուսել արտոնյալ վերաբերմունք հանրային իշխանության այլ մարմինների և այլ պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում՝ կապված իր պաշտոնեական (ծառայողական) կարգավիճակի հետ, և զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հանրային ծառայությունում այդ անձի զբաղեցրած պաշտոնով կամ քաղաքական հայացքներով:

54. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերել հավասարակշռվածություն ու զսպվածություն, չարհամարել, չծաղրել քաղաքացիներին, ինչպես նաև չբանավիճել կամ նման ձևով չարձագանքել կամ չպատասխանել անձի ուղիղ կամ անուղղակի սպառնալիքներին, վիրավորական արտահայտություններին, դիտողություններին, ռեպլիկներին, նշաններին ու ժեստերին:

55. Ոստիկանության ծառայողը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, զսպվածություն և բարեկրթություն, որևէ դեպքում չնսեմացնել նրանց պատիվն ու արժանապատվությունը, չխոչընդոտել այլ ծառայողների ծառայողական պարտականությունների կատարմանը, գործընկերների վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրանց ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը:

56. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից կամ նման տպավորություն ստեղծելուց:

57. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս, ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:

58. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված այդ անձի ունեցած պաշտոնով կամ վերադասությամբ:

59. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայության ներկայանալ պատշաճ և կոկիկ արտաքին տեսքով, պահպանել ոստիկանության ծառայողի համազգեստը կրելու սահմանված կարգը, իսկ ծառայության վայրում գտնվելիս կամ այլ վայրում ոստիկանությունը ներկայացնելիս ոստիկանության ծառայողի համազգեստով չլինելու դեպքում կրել այնպիսի հագուստ, որը չի հեղինակազրկում ոստիկանության համբավը և ապահովում է պատշաճ ներկայացուցչական տեսք:

60. Ոստիկանության ծառայողին արգելվում է օգտագործել թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր՝ բացառությամբ օրինական բժշկական նպատակներով, աշխատավայրում կամ ծառայողական պարտականությունները կատարելիս գտնվել ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ, ծխել ծառայության վայրում, բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների:

61. Ոստիկանության ծառայողին արգելվում է մոլախաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը:

62. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայության վայրում չխախտել հրդեհային անվտանգության ապահովման և սանիտարական նորմերն ու կանոնները:

ԳԼՈՒԽ 8.ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

63. Ոստիկանության ծառայողը պարտավոր է հավատարիմ լինել ոստիկանության ծառայողի երդմանը, հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն, ոստիկանության և դրա ստորաբաժանումների խորհրդանիշները և տարբերանշանները:

64. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, ոստիկանության խորհրդանիշներից և տարբերանշաններից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից կամ կրելուց:

65. Ոստիկանության ծառայողը պետք է գիտակցի, որ իր յուրաքանչյուր արարք կամ վարքագիծ կարող է հասարակության գնահատմամբ վերագրվել ոստիկանությանը, հետևաբար, պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում հարգել հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները, զերծ մնալ ոստիկանության ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՎ

66. Ոստիկանության ծառայողը պարտավոր է հարգել և չխոչընդոտել հանրության իրազեկմանն ուղղված զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում աջակցել նրանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստի տեղեկություններ ստանալու հարցում:

67. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պաշտոնական հարցազրույց տալիս կամ այլ կերպ հաղորդակցվելիս, ինչպես նաև լրատվամիջոցների

ներկայացուցիչների հարցերին կամ գրավոր հարցումներին պատասխանելիս պահպանել հաղորդակցության պատշաճ կանոնները, տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և ոստիկանության պաշտոնական դիրքորոշմանը համապատասխան տեղեկատվություն: Լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերին տեղում պատասխանելու կամ հավաստի տեղեկություններ տրամադրելու օբյեկտիվ անհնարինության կամ այլ խոչընդոտների դեպքերում՝ ոստիկանության ծառայողը նրանց առաջարկում է դիմել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հանրային հաղորդակցության և իրազեկման վարչություն կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի մամուլի քարտուղարին:

68. Ոստիկանության ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չկատարել որևէ գրառում կամ մեկնաբանություն, չհավանել կամ չտարածել գրառումներ, տեղեկություններ, որոնք կարող են վնասել, նսեմացնել, վարկաբեկել կամ այլ եղանակով արատավորել ոստիկանությունում ծառայության հեղինակությունը, ինչպես նաև կասկածի տակ դնել ոստիկանության ծառայողի կողմից իր լիազորությունների անաչառ ու պատշաճ կատարումը:

69. Ոստիկանության ծառայողը պաշտոնական օգտահաշիվները չպետք է օգտագործի անձնական կամ այլ անձանց մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ, լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ կամ այլ բնույթի տվյալներ հրապարակելու կամ տարածելու նպատակով: Պաշտոնական հաղորդագրությունները, հարցազրույցները, լուսանկարները, տեսագրությունները, ձայնագրությունները և այլ բնույթի տեղեկությունները ոստիկանության ծառայողի անձնական օգտահաշիվներում կարող են հրապարակվել, տարածվել կամ կիսվել միայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կամ ոստիկանության պաշտոնական օգտահաշիվներում հրապարակվելուց հետո:

70. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ սոցիալական ցանցերում անձնական բնույթի այնպիսի լուսանկարների, տեսագրությունների, ձայնագրությունների կամ այլ բովանդակության տեղեկությունների հրապարակումից, որոնք կարող են ողջամտորեն հիմնավորվել որպես հանրային իշխանության ինստիտուտների, ոստիկանության կամ ոստիկանության ծառայողի հեղինակության վարկաբեկում, այլ անձանց իրավունքների, արժանապատվության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքական չեզոքության և զսպվածության սկզբունքի կամ այլ սահմանափակումների խախտում:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 10. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

71. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պահպանել ծառայողական (մասնագիտական), այդ թվում՝ ոստիկանության այլ ծառայողների անձնական տվյալների գաղտնիությունը և չհրապարակել, չհանրայնացնել կամ այլ կերպ մատչելի չդարձնել (այդ թվում ծառայության դադարեցումից հետո), ծառայողական լիազորությունների իրականացման արդյունքում իրեն հասանելի դարձած պաշտոնական, ոչ հրապարակային տեղեկությունները, որոնց գաղտնիությունը կամ ոչ հրապարակային բնույթը սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին: Այս կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նման տեղեկությունների հրապարակումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

72. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

73. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պատշաճ կերպով և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնների պահպանմամբ մշակել և տնօրինել իր լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն:

74. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:

75. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր ծառայողական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կամ ոստիկանության կողմից:

76. Ոստիկանության ծառայողը պարտավոր է չհրապարակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, հարցազրույցների ընթացքում դրա հետ կապված հարցադրումները կատարել՝ առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

ԳԼՈՒԽ 11. ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

77. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր լիազորությունների իրականացման համար տրամադրված կամ իր տիրապետման ներքո գտնվող հանրային ռեսուրսները, այդ թվում՝ տրանսպորտային միջոցը (նաև՝ վառելիքը), ծառայողական սենյակը (շենքը, շինությունը), սարքավորումները, համակարգչային տեխնիկան, հեռախոսը, պաշտոնական էլեկտրոնային փոստը, համացանցը և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար:

78. Ոստիկանության ծառայողը չպետք է հանրային ռեսուրսները, այդ թվում՝ ոստիկանության այլ ծառայողների աշխատաժամանակն օգտագործի սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:

79. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել հանրային ռեսուրսների պահպանության և ոչ թույլատրելի նպատակներով դրանց օգտագործումը բացառելու ուղղությամբ:

80. Ոստիկանության ծառայողները, ովքեր իրենց լիազորություններն իրականացնելիս օգտագործում են ռադիո, արբանյակային, գծային, շարժական կամ ազդանշանային կապի միջոցներ, համակարգչային սարքավորումներ ու ծրագրեր, առցանց համակարգեր, պարտավոր են պահպանել կամ հետևել դրանց անվտանգության և անօրինական միջամտությունից պաշտպանելու կանոններին:

81. Ոստիկանության ծառայողները պարտավոր են հետևել կրծքանշանների, բանալիների, գաղտնաբառերի, ծառայողական վկայականների և նմանատիպ այլ պարագաների օգտագործման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրույթներին:

ԲԱԺԻՆ 5. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 12. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

82. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր ծառայողական պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ իր անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ: Ոստիկանության ծառայողը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորումը որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային

վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

83. Ոստիկանության ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականություններն իրականացնելիս կամ ծառայողական փոխհարաբերություններում զերծ մնալ որևէ ձևով կողմնակալ կամ խտրական վերաբերմունք դրսևորելուց:

84. Հանրային ծառայողը պարտավոր է իր գործընկերների հետ հաղորդակցվելիս՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, կատարողականի գնահատման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերություններից բխող այլ գործողություններում, ցուցաբերել հավասար վերաբերմունք:

ԳԼՈՒԽ 13. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

85.Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:

86. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որն, ի թիվս այլնի, ներառում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և ոստիկանության վարչական շենքերի տարածքում, ծառայողական տրանսպորտային միջոցում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև իր ծառայողական աշխատավայրում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզչություն իրականացնելը:

87. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջներ, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել ոստիկանության կամ այլ հանրային ծառայողների:

88. Ոստիկանության ծառայողը պարտավոր է զերծ մնալ քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալուց, քաղաքական կողմնորոշում ունեցող հոդվածներ հրապարակելուց կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմանատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց:

ԳԼՈՒԽ 14. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

89.Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր վերադասի կամ անմիջական ղեկավարի անաչառության և օբյեկտիվության նկատմամբ անվստահության կամ վերջինիս կողմից ցուցաբերված անգործության դեպքերում՝ վերջինիս վերադասին կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարեվարքության հարցերով կազմակերպչին ներկայացնել գրավոր հաղորդում կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի առերևույթ բախման իրավիճակների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու վնասակար գործողությունների, հանրային շահին ուղղված վնասի կամ էական գործառնական սխալների մասին:

90. Ոստիկանության ծառայողը պարտավոր է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել իր կամ իր վերադասի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնաբերված այլ խախտումների վերաբերյալ: Իր կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ ոստիկանության ծառայողը հաղորդում է ներկայացնում վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադասի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ՝ վերջիններիս վերադասին կամ անմիջական ղեկավարին:

91. Ոստիկանության ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր գործառույթներով պայմանավորված՝ երրորդ անձանց կողմից ցանկացած օգուտ կամ առավելություն տալու առաջարկի բոլոր դեպքերի վերաբերյալ:

92. Ոստիկանության ծառայողը պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել խախտումների մասին հաղորդում ներկայացրած ոստիկանության ծառայողների և այլ անձանց նկատմամբ:

ԲԱԺԻՆ 3. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

93. Ոստիկանության ծառայողը պետք է իր ծառայության որակը բարձրացնելու նպատակով բաց լինի նորարարական գործելակերպի նկատմամբ, շարունակաբար դիտարկի իրեն առնչվող ոլորտին վերաբերելի ազգային ու միջազգային դրական գործելակերպը, հետևի միջազգային և տարածաշրջանային զարգացումներին, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնի դրանք ներմուծել որպես կիրառման ենթակա հնարավոր պրակտիկա:

94. Ոստիկանության ծառայողը պետք է ջանքեր գործադրի ոստիկանության ոլորտին վերաբերելի առկա մարտահրավերները վեր հանելու և դրանց

հաղթահարման ուղիներ գտնելու ուղղությամբ՝ ոստիկանության այլ ծառայողների, հանրային իշխանության այլ մարմինների, հանրային քննարկումների և հանրության հետ համագործակցության այլ միջոցներով:

95. Ոստիկանության ծառայողը պետք է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերի ոստիկանության այլ ծառայողներին, հատկապես՝ նորանշանակ ոստիկանության ծառայողներին՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում:

96. Ոստիկանության ծառայողն անհրաժեշտության դեպքում պետք է ոստիկանության այլ ծառայողների ներգրավի իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, նրանց թույլ տա արտահայտել այդ որոշումների վերաբերյալ իրենց կարծիքը, իսկ դրանց չհամաձայնելու դեպքում՝ հայտնի պատճառները:

97. Ոստիկանության ծառայողը պետք է գործադրի բոլոր հնարավոր ջանքերը ծառայողական պարտականությունների կատարման համար տրամադրված հանրային ռեսուրսները, ինչպես նաև իր ծառայողական աշխատավայր հանդիսացող տարածքներն անվտանգության հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար:

98. Ոստիկանության ծառայողի վերադասը կամ անմիջական ղեկավարն իր ենթակա ոստիկանության ծառայողներին ներգրավում է իրենց առնչվող կամ ծառայության կազմակերպման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում, նրանց հնարավորություն է ընձեռում արտահայտել իրենց կարծիքը և դիրքորոշումը:

99. Ոստիկանության ծառայողի վերադասը կամ անմիջական ղեկավարը գործուն միջոցներ է ձեռնարկում երաշխավորելու հակակոռուպցիոն համակարգերի ու գործողությունների արդյունավետ կիրառումն ու համարժեքությունը՝ իր ենթակայության տակ գտնվող ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն ռիսկեր պարունակող վարքագիծ թույլ չտալու կամ կանխելու նպատակով:

100. Ոստիկանության ծառայողի վերադասը կամ անմիջական ղեկավարը խրախուսում է իր ենթակայության տակ գտնվող ոստիկանության ծառայողների կողմից կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների մասին հաղորդում ներկայացնելը, և նման վարքագծով օրինակ է ծառայում նրանց համար:

101. Ոստիկանության ծառայողը պետք է ստեղծի ծառայողական բարոյահոգեբանական բարենպաստ և առողջ միջավայր, որը կնպաստի ավելի արդյունավետ ծառայության իրականացմանը:

102. Ոստիկանության ծառայողը պաշտոնից կամ ծառայությունից ազատվելուց առաջ, իսկ որոշ դեպքերում՝ նաև դրանից հետո, պատրաստակամություն է դրսևորում նոր նշանակված ոստիկանության ծառայողին փոխանցել իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների ընթացքում ձևավորված ինստիտուցիոնալ հիշողությունը և փորձը:

103. Ոստիկանության ծառայողը պետք է բարեխղճորեն կատարի իր պարտականությունները որպես քաղաքացի, ներառյալ՝ բոլոր ֆինանսական պարտավորությունները, հատկապես՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և այլ պատրադիր բնույթի վճարումները, պահպանի երթևեկության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ կանոնները:

104. Ոստիկանության ծառայողն իր և այլ հանրային ծառայողի միջև մասնավոր ֆինանսական գործարքներ կնքելու դեպքում պետք է հավաստիանա և ապահովի, որ իրենց մասնավոր գործարքների արդյունքում իր կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և ոստիկանության հեղինակությունը վնաս չի կրի: